

Մուրբ Գրոց Մերտողութիւն : Դաս Թիւ 203

Թէպէտ Աստուծոյ անփոփոխ ընտրութիւնը բացարձակօրէն հաստատում է Իր ժողովրդի յարատեւութիւնը, սակայն Աստուած իրականացնում է այդ Իր սահմանաւ միջոցներով՝ որը ներառնում են Աստուածաշնչում գտնուած զգուշացումները: Այս վարդապետական ենթապատկերով մենք կարող ենք այժմ նկատի առնել որոշ հատուածները որն քննադատողները պնդում են թէ զգուշացնում են հաւատացեալների փրկութիւնը կորցնելու հնարաւորութեան մասին, կամ նոյնիսկ ուսուցանում են որ ոմանք իրականում ընկան Քրիստոսից:

Որթն ու ճիւղերը – Մի յաճախ նշուած հատուածն է Յովհաննէս 15:1-8ը: Մէկ ձեռքի վրայ, Արմէնական վարդապետութիւնը հաստատում է որ Յիսուսը ուսուցանում է թէ ճշմարիտ հաւատացեալները որոնք պտուղ չեն տալիս կ'կտրուեն՝ այսինքն կարող են կորցնել իրենց փրկութիւնը: Բայց ինչպէս մենք տեսել ենք, այսպէս մի տեսանկիւն հակասում է Աստուածաշնչի յստակ ուսուցումը որ իրական հաւատացեալներ չեն կորցնի իրենց փրկութիւնը, որովհետեւ Աստուածն է որը պահպանում է նրանց: Սրա առթիւ եղած ամենաուժեղ նախադասութիւններից որոշը գտնում են հենց Յովհաննէսի Աւետարանում (Յովհաննէս 6:39-40, 54, 10:27-29):

Միւս ձեռքի վրայ, ոմանք որը համաձայնում որ 2րդ համարը խօսում է ճշմարիտ հաւատացեալների առթիւ, փորձելով պաշտպանել հաւատացեալների փրկութեան յաւիտենականութիւնը առաջարկում են որ այն բայը որը թարգմանել է որպէս «կտրում է» իրականում նշանակում է «բարձրացնել կամ վերցնել», ուստի իրականում Հայրը չի հեռացնում կամ կտրում այդ անպտուղ ճիւղերը, այլ պարզապէս բարձրացնում է նրանց՝ քաջալերելով նրանց, գուցէ հողից դուրս հանելով, որպէսզի պտուղ տան: Նրանք ակնարկում են այսպիսի ճիւղերին որպէս նրանք որը ունեն կեանք՝ քանի որ նրանք որթի մէջն են, սակայն առանց պտուղ, լինելով անհնազանդ հաւատացեալներ: Սակայն, Յովհաննէս 15ի ենթահողում եւ կապուած այդ ինչին որ Յիսուսը սովորեցրել է այլուր ճշմարիտ աշակերտ լինելու առթիւ, այս բայի իմաստը 2րդ համարում բարձրացնել չի իսկ կտրել է, հեռացնել է: Բոլոր նրանք որոնք պատկանում են Քրիստոսին պտուղ կ'տան՝ թէկուզ տարբեր աստիճաններով, որովհետեւ չի կարող լինի Քրիստոսի ճշմարիտ աշակերտ որը ամբողջովին անպտուղ է: Քրիստոսը ուսուցանում է թէ անպտուղութիւնը անբնական է (տարօրինակ, աննորմալ է)՝ մի նշան որ չկայ որեւէ հոգեւոր կեանք (Մարկոս 4:3-8, 14-20, 11:13-14):

Միայն որ շատեր անում են այն է որ կարծում են թէ որթի մէջ լինելը նշանակում է լինել փրկուած: Բայց այն չէ Քրիստոսի շէշը այստեղ, փոխարէն, որթի մէջ լինելը նշանակում է լինել տեսանելի եկեղեցում՝ այսինքն բոլոր նրանք որոնք դաւանում են լինել հաւատացեալներ: Նրանցից ոմանք ճշմարիտ հաւատացեալներ են, իսկ միւսները չեն՝ որը երեւութապէս թուում են որ ունեն կեանք, սակայն ներքնապէս չունեն որեւէ յարաբերութիւն Քրիստոսի հետ, եւ ուստի անպտուղ են (Մատթէոս 7:21-23): Սա նոյն պատկերաբանութիւնն է որը տեսնում ենք Հին Կտակարանում: Իսրայէլը Աստուծոյ որթն էր, բայց այդ չէր նշանակում որ ամեն Իսրայէլացի ճշմարիտ հաւատացեալ էր: Իսրայէլացիներ ազգային առմամբ Հրէաներ էին, սակայն նրանցից շատերը ըստ իրենց հոգեւոր վիճակը իսկական Հրէաներ չէին (Յովհաննէս 8:39, Հռովմայեցիս 2:28-29, 9:6-8, Գաղատացիս 3:7, 29): Ուստի, Յովհաննէս 15ում իրական հաւատացեալներ այդ ճիւղերը չեն՝ այդ իբր թէ անհնազանդ հաւատացեալները որը պէտք ունեն բարձրացելու որպէսզի պտուղ բերեն. փոխարէն, ճշմարիտ հաւատացեալներ նրանք են որը պտուղ են բերում, եւ Հայրը մաքրում է բոլորին՝ սրբում ու գտում է նրանց: Մշակի այս արարքը ճիւղերի կտրուելը չի այլ ճիւղերի մաքրելն է՝ դրանց սրբելն ու սնուցանելն է, հեռացնելով միջատներն կամ որեւէ ախտ, որ դրանք աւելի շատ պտուղ բերեն (Յակոբոս 1:2-4):

Յիսուսը 3րդ համարում ասում է թէ՛ «Դուք արդէն մաքուր եք այն խօսքի համար, որ ձեզ հետ խօսեցի»: Յիսուսը խօսում է ճշմարիտ հաւատացեալների մասին, որն արդէն մաքուր են, ակնարկելով արդարացման կամ դրքային սրբագործութեան (Յովհաննէս 13:8-10, Ա. Կորնթացիս 6:11, Եբրայեցիս 10:10, 14): Յիսուսը այս չի ասում անպտուղ ճիւղերի մասին, որովհետեւ նրանք մաքուր չեն: Ապա 4րդ համարում Նա ասում է թէ՛ «Կացէք Ինձանում եւ Ես ձեզանում. ինչպէս որ ճիւղն իր անձիցը կարող չէ պտուղ բերել, եթէ որթումը չ'մնայ, այսպէս ոչ էլ դուք՝ եթէ Ինձանում չ'մնաք»: Այս բայը նշանակում է մնալ, բնակւել, մի տեղ կանգ առնել. այն հաղորդում է մօտիկութիւն, յարատեւութիւն, եւ մշտականութիւն: Այստեղ Քրիստոսը խօսում է հաւատացեալների առթիւ, քանի որ նրանք կ'շարունակեն կենալ Նրանում. եւ նրանց կենալը իրենց փրկութեան փաստն է: Անպտուղ ճիւղերը կեղծ դաւանողներն են, որոնք փաստում են որ երբէք չ'են պատկանում Քրիստոսին, եւ նրանց վերջը դատապարտութիւն է (համար 6, Մատթէոս 3:10-12, 13:40-42, 25:41, Յայտնութիւն 20:10-15):

Յիսուսը աշակերտներին ուսուցանեց այս ճշմարտութիւնները որ միխթարելու նրանց եւ ուրախութիւն տալու նրանց (համար 11, Յովհաննէս 14:1): Փրկութիւնը կորցնելու կամ մի ամբողջովին անպտուղ հաւատացեալ լինելու հնարաւորութիւնը կ'ունենար մի հակառակ ազդեցութիւն: Սակայն, այն ճշմարտութիւնը որ իրական հաւատացեալներ կ'կենան Քրիստոսում, կ'պտղաբերեն, եւ կ'մաքրուեն որ աւելի պտղաբեր լինեն տալիս է մեզ հսկայական վստահութիւն եւ ցնծութիւն՝ մեր լաւ պահերում ինչպէս նաեւ մեր փորձութիւնների մէջ: